ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 01

<< ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/47>> ԾԱԾԿԱԳՐՈՎ <<12.09.2024թ.>> ԿՆՔՎԱԾ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24» «10» 2024թ.

ք.Հրազդան

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Ս. Միքայելյանի,** որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ Պատվիրատու) մի կողմից **«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Շիշանյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով **«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/47»** ծածկագրով Պայմանագիրը, **«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/47»** ծածկագրով գնման ընթացակարգի ստորաբաժանման անդամների կողմից տրված հայտը, կողմերը համաձայնվեցին նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները և շարադրել հետևյալ նախադասությամբ՝ **«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցից մինչև 3-րդ թաղամասի մեծ եկեղեցու և 5-րդ փողոցից մինչև հանգստյան քար հատվածները, իսկ 1-ին փողոցը նախագծել միակողմանի մայթով»:**

Ելնելով վերոգրյալից նախկին անվանումը շարադրել հետևյալ կերպ՝ **« ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցի , 1-ին փողոցից մինչև 3-րդ թաղամասի մեծ եկեղեցի հատվածի և 5-րդ փողոցի մինչև հանգստյան քար հատվածի հիմնանորոգման նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքներ»:**

Հաշվի առնելով վերոհիշյալ փոփոխությունները աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.1.1 Պայմանագրի հավելված N 1 հավելվածը սահմանել հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին:

1.1.2 Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը սահմանել հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով : Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ , ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հրազդանի համայնքապետարան ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440 ՀՎՀՀ 03027114	«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, Զ. Շիրյան 63 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163558048878 ՀՎՀՀ 08422527

Հավելված N 1
« » 2024թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աշխատանքի									
								կատարման	
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	71241200/26	**ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցի, 1-ին փողոցից մինչև 3-րդ թաղամասի մեծ եկեղեցի հատվածի և 5-րդ փողոցի մինչև հանգստյան քար հատվածի հիմնանորոգման նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքներ**	Ներկայացված է ստորև	դրամ	850 000	850 000	1	Հրազդան համայնք, Լեռնանիստ բնակավայր	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր

Չափաբաժին 1

1	Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	ՀՀ Կոտայքի մարզ,Հրազդան համայնք,գ.Լեռնանիստ 1-ին փողոց, 1-ին և 7-րդ թաղամասերի փողոցներ, **Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցի, 1-ին փողոցից մինչև 3-րդ թաղամասի մեծ եկեղեցի հատվածի և 5-րդ փողոցի մինչև հանգստյան քար հատվածի հիմնանորոգում, 1-ին փողոցը՝ միակողմանի մայթով** ընդհանուր երկարությունը կազմում է 1600.0 գմ, լայնությունը՝ 6-8 մ, Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, Գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման: Գոյություն ունեցող ճանապարհների հիմնանորոգում: Նախատեսվող բոլոր հիմնանորոգման աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով մշակված ու հաստատված նախագծի հիման վրա: Նախագիծը մշակելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնատակի գրունտը, համապատասխան ակտով վկայագրել այն և անհրաժեշտության դեպքում նախագծում նախատեսել համապատասխան միջոցառումներ
2	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքներ ի համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է** ՈՒսումնասիրել տարածքը և ձեռք բերել օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (-ներ),անհրաժեշտության դեպքում ձեռք բերել արտաքին և ներքին հաղորդակցուղիների տեխնիկական պայմաններ, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ, հաշվի առնելով տեղանքը՝ հողամասի մակերևույթի բացարձակ նիշերի տատանման սահմանների ընդգծմամբ, ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար, նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող և օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ նախագծով նախատեսել ջրահեռացման համակարգերի կառուցում, Նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ: **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** Նախագծային լուծումներով անհրաժեշտ է ապահովել հիմնանորոգման աշխատանքներ՝ օրենսդրությամբ նախատեսված պահանջների և փաստացի կարիքի գնահատմամբ: Հիմնանորոգվող ճանապարհների հատակագծային լուծումներ,ժամանակավոր նախազգուշացնող,արգելող և այլ անհրաժեշտ ճանապարհային նշանների տեղադրում,գծանշման աշխատանքներ և հիմնական ճանապարհային նշանների տեղադրում՝ նորմատիվ պահանջների համաձայն. Բնակավայրի կառուցապատման նախագիծը մշակել կառուցապատման չափորոշիչներին համապատասխան՝ համայնքի զարգացման ծրագրի, գլխավոր հատակագծի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով հաստատված պահանջների շրջանակներում:
3	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ** հողհատկացման հիմքեր ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), հանույթ, չափագրություններ, ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն): **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** <Քաղաքաշինության մասին> օրենք <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին> օրենք <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> օրենք/ըստ անհրաժեշտության/ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-20223 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու **N 04-Ն հրաման**, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 22-ի «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 12-Ն հրաման,** ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» **N 253-Ն հրաման**, -ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում**
4	Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքները իրականացում է **«Աշխատանքային նախագիծ »** փուլով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ**՝ ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)

5	Նախագծի կազմը	**«Աշխատանքային նախագիծ » <u>փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** **Ընդհանուր բացատրագիր** **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) **Ճարտարապետաշինարարական մաս** Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ **Կոնստրուկտիվ մաս** Կոնստրուկտիվ լուծումներ, կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ Շինարարության կազմակերպման նախագիծ Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ *<u>Նախագծի համաձայնեցում</u>* **Համայնքի ղեկավարի,** **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,** **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,** Ըստ անհրաժեշտության՝ (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:**
6	Այլ պահանջներ	***<u>Եզրակացություններ</u>*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում **Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով Որպես միջինից բարձր ռիսկայնության **(3-րդ կատեգորիայի)** դասակարգում ունեցող օբյեկտ՝ քաղաքաշինական պարզ փորձաքննություն ապահովում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով (**պատվիրատուի կողմից**), **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ, Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն, կրիչներով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրությա
հրապարակ 1 վարչական
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

---------------------------- Ա.ՄԻՐՋՈՅԱՆ

(ստորագրություն)

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
գ. Կարմիրգյուղ, Ձ. Շիոյան 63
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163558048878
ՀՎՀՀ 08422527

----------------------------Ա. Շիշանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » 10 2024թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում****												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/26	**ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցի, 1-ին փողոցից մինչև 3-րդ թաղամասի մեծ եկեղեցի հատվածի և 5-րդ փողոցի մինչև հանգստյան քար հատվածի հիմնանորոգման նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքներ**	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	**850 000**	**850 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

----------Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
գ. Կարմիրգյուղ, Զ. Շիոյան 63
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163558048878
ՀՎՀՀ 08422527

----------Ա. Շիշանյան
(ստորագրություն)